ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 20

<<30>> օգոստոսի 2016 թվական գյուղ Գուսանագյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՆ ԹԻՎ 1/2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Քաղաքացիական օրենսգրքի>> 605-րդ հոդվածի, <<Հողային օրենսգրքի>> 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2007 թվականի հունվարի 16-ի «Գույք հանձնելու մասին» թիվ 099-219 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի ապրիլի 17 թիվ 28 կարգադրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գուսանագյուղի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գուսանագյուղի համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ Գուսանագյուղ գյուղի 14-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող ուսուցչի տան թիվ 2 բնակարանը (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N22082016-08-0025, տրված՝ 22-ը օգոստոսի 2016 թվականին) օրենքով սահմանված կարգով նվիրաբերել այդ բնակարանում 1989 թվականից փաստացի բնակվող, «Գուսանայուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժ, Գուսանագյուղ գյուղի բնակիչ՝ Սուսաննա Ռազմիկի Վարժապետյանի ընտանիքին:
2.Բնակելի տան նկատմամբ համասեփականատերեր ճանաչել՝ Սուսաննա Ռազմիկի Վարժապետյանին և Ալվինա Սամվելի Ալեքսանյանին:
3.Գուսանագյուղի համայնքի ղեկավար Վասակ Ղազարյանին՝
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիներ՝ Սուսաննա Ռազմիկի Վարժապետյանի և Ալվինա Սամվելի Ալեքսանյանի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:
4.Տվյալ բնակելի տան պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ Գուսանագյուղ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00438 հա հողամասը՝ 9720 դրամով,կադաստրային արժեքով օտարել Սուսաննա Ռազմիկի Վարժապետյանին և Ալվինա Սամվելի Ալեքսանյանին: